


ԲԱՏՆԵԳԻՆ
Մ. ՆԱՀԱՆԳՈՒՑ ՀԱՄԱՐ
Տարեկան \$1.50
Վեցամսեայ 0.85


ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան 10 Ֆրանք
ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր:

ԳԻՆ 3 ՄԷՆԹ:



Հայրենեաց



ՀԱՄԱԹ
AN ARMENIAN WEEKLY.

AMERICAN HAI PUBLISHING Co
209 E. 23d St., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter

Subscription \$1.50 a Year.

ՇԱՄԱԹ-ԱՌԵՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ո՛վ պիտի փրկէ մեզ. — Եթէ չը գիտէք գէթ լեցնէք. — Դէս ու Դէն Նամակ Լինէն. — Նամակ Պոստօնէն. — Ներքին լուրեր. — Բաղադրական. — Բանասիրական (Շարժումը կենսիք է և կենսիքը շարժում):

Ո՛վ ՊԻՏԻ ՓՐԿԷ ՄԵԶ

Բ.

Մեր նախնիներ առաջնորդողով ջանացինք ցուցնել թէ ինչպիսի օրինակներով պիտի փրկուինք մեզ կ'արդիւնաւորուի նոյն ազգին ներքին կենսիքին անհնարելի կայծերէն: Այդ կայծն անգործարարութիւնն է՝ այլ ծնունդ. ինքն իր յաւիտենական մայրը ըլլալով. սա՛ այդ քայքայուած գործը ամեն կենսականութեան անմահ կորիզն է: Ծծուած ամեն հնարաւորութիւնով, Հոն եկած կեդրոնացած են ցեղին անթիւ անհասանելուն հոգեկան ձգտումներն այնպէս, ինչպէս սովորած և ապակիին մէջ արեւին անգործողները կը կեդրոնանան եւ կը կազմեն վառող, հրդեհող կայծը: Դա՛ խոցուած, հրկանդ և ուժասպառ ժողովուրդին սիրտն է, ապրելու կամքին կայանը, ուր կը վառի ազգային արժանապատուութիւնը, Հոն կը հաւաքուի ազգային սրբութիւններէ զտուած կենսաւէտ հիւթը և անկէ կը տարածուի խոցուած, ուժասպառ ու հիւսիսէ մարմնոյն ամեն կողմը: Անկէ վերածնութեան ընթացքներ կ'ընեն՝ ազատութեան դրօշը ծաղիկ բացած, որուն վրայ յաղորդութիւնը կը բեզդեղէ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԵԱՆՔԸ ՇԱՐՇՈՒՄ Ե ԵՒ ՇԱՐՇՈՒՄԸ ԿԵԱՆՔ

(Շարունակութիւն Նախորդ Թուէն)

Ո՛չ ապաքէն ճիշդ միեւնոյն երևոյթը տեղի ունեցած էր Հինգերորդ դարուն սկիզբները, երբ նորէն Հայաստանի արևմտեայ կողմը Բիւզանդական կայսրութեան ոտսանին մէջ ժամանակին յարմար քաղաքակրթութիւն մը կը ծագէր և հայերը՝ թէև ազատ, ինքնավար, սակայն լուսաւորութեան կեդրոններէն կը զրկուած ժողովուրդ մը, ինքնաշարժութեան միջոցներէն զուրկ, երբ հազիւ քանի մը տարի ազատութիւն կ'ըզգային կամ իրենց հոգիի թռիչքներուն սաւառնելու սապարէզ կը արուէր, կը վազէին Հոն, ուր արդէն լոյսը պատրաստ էր. պէտք էր միայն զայն իւրացնել և իրենց մէջ ամփոփել ջանալ: Այդ ազնիւ շարժումը մեզ կ'ընծայէր Սահակ Պարթևներ, Մեսրոպներ, Եղիշեան, Փարպեցիներ, Սարգսյաններ, Եղիշեան և այլ շարք մը լուսաւորութեան ջանքեր, որոնցմով մեր սակեպարը զարդարելու պարծանքը կը զգանք և մինչև հիմա ալ հպարտ ենք անոնցմով:

և նոր բազմի արեւը կը փայլի: Կիջնեն բունութեան կատարի հարուածները, կը ջլատեն, կը չքացունեն զանոնք, Անգամ մ'ալ ամայութիւնը կը տիրէ Հոն՝ անհամեմատ աղէտներով լի: Սակայն այդ սեւ հոգեբուն տակ անշէջ ու աննուած կը մնայ կենսիքի կայծիկը. նա իր վրայէն անցած մահաարտու ծովները կ'արհամարհէ. նորէն դուրս կուտայ իր վերականգնումի մասաւր արտայայտութիւնները, աւելի վնաս և առաւել վճռական կերպով: Կըրկին կը ջլատուի. վերտուին կ'ընծիւղի. մինչև իր ստացած անընդհատ հարուածներէն զօրութեան այնպիսի համեմատութիւն մը կը ստանայ, որ օր մը, իր փրկութեան վճռական օրը՝ վերջնականորէն, հզօր յաղթանակի մը պէս իր գերեզմաններէն դուրս կուգայ: Այլ ևս նա այնքան ահաւոր է, որ անոր առջևէն թշնամի կը հալածուի, և ինք կուռնանայ, կը զօրանայ, կը բարգաւաճի: Ալ փրկուած է, ալ ազատ է:

Նախնիներ առաջ մէջ ազատուած երկը ազգերը, Գիւլապ, Փիլիպաններ և Կրեալ, շապաղուցի՛ն արդեօք այս պատմական իրաւունքները:

Այդ ազգային կենսիքի կայծիկին տուող ջանքերը, զօրութիւնը և արդիւնաբերութիւնը կը պայմանաւորուի գիտակցութեան, զոգարեութեան և անվեհեթեմեան միացեալ ներդրումներով: Այս երրորդութեան օր և է միոյն թերութիւնը կամ բացակայութիւնը տրեկարութիւն կամ հիւսիսէութիւն կը պատճառէ ամբողջ կենսիքին:

Գիտակցութեան պակասութիւնով անվեհեթեմեան տեսնողը կը վարակուի: Հիւսիսէ է. տաք գլուխ է և ուռնափրփո: Իր գործունէութեան մէջ կ'արհամարհէ հաշիւը, խելիքը և խորհուրդը. խախտած շէնքի մը պէս կը փլչի ու կը փլչի, իւր ամեն մէկ անկումը թշնամիին համար նոր հարուած մը համարելով: Անոր շարժումները խանգարուած են. ան որակելի

Մեր նախնի առաքեալներուն և նորերուն միջև անազնին տարբերութիւն մը կար սակայն, որ բ'աւ չենք կրնար զանց ընել: Մին այն էր, որ սակեպարու առաքեալները իրենց գլուխը կը լինցէին միեւնոյն աղբիւրէն և հետևաբար իրար առելի լաւ և մեկին կերպով կը հասկնային եւ սխալ ըմբռնումներով մոլորած ալ հարկ չէր մնար տարբեր տարբեր ուղղութեանց վրայ վիճել: Երկրորդ՝ Հայ ժողովուրդը որոշ շրջանի մը մէջ ամփոփուած և իր հայրենի երկրին տէր, այնքան դժուարութիւն չէր ընծայէր իր մէջ գործող և իր մտաւորական շարժման առաջնորդող վարդապետներուն: Մինչդեռ այս նոր շարժումին մէջ այդ երկու պարագաներն ալ բոլորովին հակառակը կը ներկայացնէին նախնիներին: Հայր որոշ տեղ մը չունէր, Գանկէնէն սկսեալ մինչև Լենա գետը, Սաղաւաղանէն մինչև Պալթիկը սփռուած ժողովուրդ մըն էր այն: Հայն իր ամբողջ առաւելութիւններով, իր սամեն տեսակ բարձր առանձնայատկութիւններով բունութեան լուծին տակ որքան որ ալ համակերպելու բնաւորութեան տրեկարութիւնը, սակայն իր մէջ ծագում առած ուրիշ ձգտումներ, որոնք նոյնքան բարձր էին՝ յաղթած էին Հայրենիքի հոգին կ'պած մնալու գաղափարին և իրենց գոհացումը փնտռած էին գաղթականութեան մէջ:

ապուշութիւնով կը վազէ խարուհի յոսերու ետեւէ. ինչ ընելիքը չը գիտէր. միայն բուն մ'ընել կուզէ: Եւ հետեանքը կը լայն աղէտալի սպառում, աւեր ու արհաւիրք:

Անվեհեթեմեան բացակայութենէն՝ զոգարեութեան արտադրութիւնը մեռեալ տառ կը մնայ: Ազգային փրկութեան նպատակին ամեն բան, ամեն միջոց զօհեր սիրտ կայ, բայց քաջասրտութիւն չկայ. ազգասէր են, հայրենասէր են, կը տենջան ծառայել ազգին, հայրենիքին, սակայն երբ դժուարութիւններ, վտանգներ, վարկեր երևան կուգան, անոնք վեհերոտները՝ կ'ազարեկին, անոնց հաւատքին մէջը կը կոտորի, յոյսին ճրագը կը մարի, կը վարանին, կը լքանին, անյուսութեան խաւարը կը պատէ զանոնք, մենք բանի մէջ անկարելիութիւնը կը շօշափեն. ալ՛ ճար չկայ, ալ՛ միջոց չկայ, ալ՛ ջանքի, ճիշդ արդիւնք չկայ: Ուստի անոնք ձեռքերին ծալած՝ ամուր կը գրկեն ստրկութեան շղթան, կը համակերպին բունութեան եւ բողոքին կըստան. և այդ սպասուող բողոքը՝ ազգային դժբաղդութեանց յաւիտենական շղթան կը յօրինէ:

Ազգային փրկութեան ճիգերու շրջաններէն յառաջ եկած փորձառութիւնն է որ կը ծնի վերայիլեալ փրկարար երրորդութեան գոյութիւնը եւ ներդաշնակութիւնը:

Երբ ազգին թափած հերոսական ճիգերէն ետքը՝ հայրենիքին վրայ մահ եւ աւեր միայն կը տարածուին, երբ նահատակներու դիակները տեսնուած են շէնքու մոխրակոյտերու մէջէն արհաւիրք մահուան սուտերներով վեր կը բարձրանայ, անոր ազգած քառամուսնիէն հիասթափում մը կ'ընենք ժողովուրդին երակներու մէջէն եւ կ'արթնանք գիտակցութիւնը. նա կ'ըզգայ թէ երբ և ի՞նչ ընելու էր, կամ ընելու չէր. կը աննէ թէ ալ եւս ի՞նչ ընելու չէ եւ ի՞նչ ընելու է, եւ

րին և իրենց գոհացումը փնտռած էին գաղթականութեան մէջ:

Այս ամենէն զատ, Ռուբինեանց տիրապետութեան ժամանակ Հայը իր ծովային պետութիւն՝ սերտ յարաբերութիւն մը տեսած և շատ մը վաճառականական դաշնադրութիւններով կապուած վեհնակի հանրապետութեան, Հոյսնայի, ինչպէս նաև ձեռնովայի և այլ ուրիշ եւրոպական նահանգներու հետ, ծաղկեցուցած էր վաճառականութեան արհեստը, ուր զտած էր ազգային հարստութեան առատ աղբիւր: Երբ մեր վերջին տիրապետութիւնն ալ կը կործանէր, վաճառական դասակարգը, որ փոքր թիւ չէր ներկայացնէր այդ ժամանակ, կ'երթար աւելի ազատ տիրապետութիւններու թիւերն առ թէ՛ իր կենսիքի սպառնութիւնը փնտռելու և թէ՛ իր այդ արհեստը զարգացնելու:

Այս նոր միջավայրին մէջ, որ այնքան փայլուն, խոտմնաղի կողմեր ունէր եւ որուն հետ բողոքաւորով սնոր կամքը, այնքան զօրեղ չէր և իր մէջ հասարակաւ ուժ չունէր մաքառումի, թիչ յետոյ նա կը լուծուէր միջավայրին մէջ և կը ձուլուէր այն ժողովուրդին հետ, որուն դրացի էր: Հոս գաղթականութիւնը կը լուրջ մենէ բաւական թուով հայեր:

Երբ: Ալ կը ջանայ այն, շրջաճայեաց կը լայ, կը հաշուէ, կը խորհի, մտիկ կընէ:

Երբ ռիսիկի թշնամիին սուրը անխնայ կը կոտորէ ժողովուրդը, անոր սպրոզ մնացորդը՝ իր նահատակ սիրելիներուն սրտաշարժ տեսարանին առջև վրէժխնդրութեան կայծերով կը բորբոքի: նա իր սիրելիներուն մահը տեսնելով ալ մահուանէ չվարանար, ալ քաջասիրտ է, խանդավառ գիտակցութիւնով մը կը վազէ դէպի հայրենեաց սրբազան սեղանը՝ զոհուելու հայրենեաց փրկութեան:

Երբ երկրին մէջ կը տիրէ ընդհանուր անապահովութիւն, երբ ամենուրեւ պատեր, շահն ու հանգիստը կը կապուի բնաջնջման դատապարտուած Հայրենիքի հետ, այն ասան հասարակաց թշնամիին առջև կը միանան եւ զոհարեութեան նոյն ընդհանրական սգովն կը բռնկին նոյն հայրենիքի զաւակներն ամեն դասակարգէ, զի թշնամին դատապարտի խտրութիւն ըրած չէ:

Գ. Պ. ՉԻԹ ՃԵՍՆ

ԵԹԷ ԶԼ ԳԻՏԵՔ ԳԻԹ ԼՈՒՅԵԻՔ

(Հայհոյանք ու Փախուստ պատասխան չէ)

Երբ մէկի մը ազիտութիւն կը մերկացնեն, ու ատ մէջը՝ փոխանակ ազուտութիւն ունենանալու, խոտովանելու և սովորելու ջանքն ունենալու, կ'ըլլէ ու կ'սկսէ փաստերը խեղաթիւրել և ուղղակի անձնականի հետ կապ չունեցող խեղդի մը մէջ անձնականի վրայ յարձակիլ և անազնի ու անվայել հոյհոյանքներ թափել, իսկապէս մարդու վեհանձնութիւնն ու միեւնոյն ժամանակ համեստութիւնը վերաբորուելով՝ այդպիսիներուն պատասխանելու երեսուն նայիլ անգամ արժան չի համարիր: Բայց առաջին ու վերջին անգամ ըլլալով՝ արեւի լոյսի պէս պարզ այս խեղդի մէջ իրենց

Թաթարներու և Պարսիկներու արշաւանքին տակ ընկճած և սակայն միշտ հարստանալու տենջն բռնուած, մաս մը ժողովուրդ ալ իրեն համարէր ծովերայ կենսիք և մայրաքաղաքի շքեղութիւնը, նազուրս կուգար իր բնակավայրէն, թողլով որ վայրենի քիւրտն ու թուրք տիրանան իր լեռնային ազատ գիւղերին: Մովսէսի կենսիքն ալ անոր մէջ կը զարգացնէր բարոյական հիւսիսէութիւններէն թուրմարթութիւնը և մեղկութիւնը և իր մէջ բուն կը գնէր հրէական շահատիրութեան գծու սղին: Ահա այս շրջանին մէջ պիտի գործէին նոր առաքեալները:

Իրեւ միջանկեալ, այստեղ բոսմ թէ Հայը իր պատերազմիկ ժողովուրդ մը եղած է, իր ինքնութիւնը կորսնցնելու գէժ մաքառած է և իր ազատութիւնը ուղած է պահպանել բուն հայկական տեսակէտով: Ատոր համար նա միշտ ատած է արտաքին ո՛ր և է միջամտութիւն իւր քաղաքական գործերուն մէջ: Այդ բանը հաստատելու համար՝ ես այստեղ հատուած մը պիտի բերեմ Տախտոսի տարեգրութեանէն: Պատմագիր մը, որ ներքին ժամանակ կ'ապրէր, Հոսմայեցի պատմագիրներէն գրեթէ զլիաւ որոնքէն մին, որ Հայաստանի այդ ժամանակի քաղա-

ունենցած տգիտութիւնն ու անազնի վարմունքը ցուցնելով կը լռենք, արդար թատախանքը հասկացող դատակարարին թողով:

Պատժուէն «Ա.» ստորագրութեամբ իմաստակ տգէտ մը ելաւ ու հրապարակաւ պոռայ աղտոտած, դժբաղդ արար մեզ գրացի հայաստան թերթի մէջ՝ «Մեր գրականութիւնը Յունարէնէ, Լատիներէնէ և Պարսկերէնէ ԳՈՂՈՒԱՅ է», և անշուշտ բնաւ առ տողերը չի կրնար ուրանալ: Ըստենցաւ կատարեալ տգիտութիւն ու իմաստակութիւն կայ այդ տողերի մէջ, ու պիտի մնայ:

Արդ, Պ. թ. 2.՝ երբ այս իրաւացի նկատողութեան տակ՝ մէկ շունչ մինչև Հայոց Գրադարան վազեցիք և անկէ «Հայկական Հին Դպրոցի պատմութիւնը» վերցուցիք, արդե՞ք որքա՞ն գիշերներ անքուն քրքրեցիք և թերթեցիք. գէթ մի տող, գէթ մի խօսք, գէթ մի մատենագրի մասին, կրցա՞ք գտնել թէ գողցուած է:

Բայց գիրք մը ուսումնասիրելու շահ չնորհք ունի՞ք: Հազրե այդ գրքի մինչ շրջ երեսն էք կարդացեր: Երանի՞ թէ կարդայիք այդ գիրքը, շա՞տ կարդայիք, և այն ժամանակ ձեր խորին տգիտութիւնը հրապարակի վրայ աճուրդի չէ՞ք հաներ:

Ասէ՛ք, խնդրեմ, ի՞նչ ըրիք, ո՞ւր պահեցիք ԳՈՂՈՒԱՅ բնաւ: Ինչո՞ւ լը՛նեցիք այդ մասին. ամբողջ աշխարհի մէջ գտա՞ք ձեզ պէս տգէտ մ'ալ, որ ըսած ըլլար թէ մեր ամբողջ գրականութիւնը գողցուած է, որոյ շուրջ կը դառնայ մարդ խնդրը, որմէ դուրս լուրթեամբ իոյս տալ կուզէք:

Ելե՛ր էք Մ. Մամուրեանի պատմութեան գրքէն որպէս փաստ կը բերէք. «Մեր գրականութիւնը ներգործուած է Լատինական, Յունական և Ասորական գրականութիւններէն», այն ինչ որ «Գիտողի յօդուածի մէջ շեշտուած էր. երեկ դուք չէք հասկնար գրական ազդեցութիւնն ու ներգործութիւնը հայկական գրականութեան մէջ՝ այնքան մ'ալ հայերէն չգիտէք» և այնտեղ ցոյց տրուած էր, և հիմա ալ մենք կը կրկնենք թէ Յունական պատմութեան փաստաւորութիւնը և փաստաւորութիւնը զորոք են եղեր յունարէնով: Իսկ Ձեռնորդ-Գրական ստորերէն, ինքն ալ Ասորի էր, թէ և Գրական Հայ վանուց վանակայր, նոյն և Լատինաց: Հոն որոշ կերպով քանիցս ըսուած էր թէ Հայ գրականութիւնը ազդուած է եղեր, և մենք կը յանդիման որ մեր նախնի մատենագիրներն ընդհանրապէս ծանօթ ըլլալով յոյն ու ասորի լեզուներուն, օգտուած են և այդ ազգի պատմագիրներէն: Խորենացին բազմաթիւ յոյն ու ասորի մատենագիրներէ ունենցեր իր ձեռքին: Ուրեմն դուք դենելով Մ. Մամուրեանի

այն նախադասութիւնը, հաստատած էիք «Գիտողի յոդուածը և հրապարակած ձեր տգիտութիւնը: Մամուրեան անբարձր-ծուած է» ըսելով ձեր ԳՈՂՈՒԱՅ է բառը չպապացուցաներ. ամենհասարակ ինքեցողին համար ալ այդ շատ պարզ է: Ուրեմն հրապարակորէն ըսէ՛ք, ազէ՛ք չէ՛ք Հայ ամբողջ գրականութիւնը ԳՈՂ առուանելու գ համար:

Ըսէ՛ք խնդրեմ և մի ՏՈՂ, Մի ՈՍՄ-ի ցոյց տուէք «Գիտողի յօդուածէն», որ նա Հայ գրականութիւնը բազմաժան ըլլար Յունական և Լատինական գրականութեանց հետ և Հայ գրականութիւնը բարձր դասած ըլլար, որ դուք երբ «Գրականութեան պատմութեան» երկրորդ երկու ամբողջութեամբ արտասուել էք, որպէս փաստ: Դուք ձեր պարագ խելագատակի մէջ ստեղծեցիք այդ ենթացութիւնն և երբ էք փաստեր ռուս կը բերէք: Կը կրկնենք. ցոյց տուէք «Գիտողի» սող մը, եթէ ո՛չ դուք ձեր ստուերին հետ է որ կը կուտէք, կամ ուրիշ վրայէն իր բերնէն ուրիշ ձող ու իր շուքին հետ կուտողին նման: Ասում՞ պիտի ապացուցանէք թէ Հայ գրականութիւնը «գողցուած է»:

Հայ գրականութիւնը լատինական ու յունական գրականութիւնէն ազգաս ըլլալը, մենք շատ վաղուց սովորած ենք, իսկ դուք, Պ. թ. 2.՝ երբ բացիք «Գրականութեան պատմութիւնը» և կարդացիք որ Հայ գրականութիւնը ՔՍՂԴԱՍՄԱՅ յունականին և լատինականին ազգաս է, ինչո՞ւ մի երկու թուղթ չը թղթաւեցիք և չը կարդացիք նոյն հեղինակին Պատկառելի Յ. Գ. Զարեանէն ձեր հետեւալ տողերը. «Բայց իր ազգատուութեան ալ՝ պատուական է, և պէտք է ըլլայ, մեզի համար մեր ազգային մատենագրութիւնը: Լեզուներ իրեն նախնական վայելչութեան մէջ՝ անոնց պարտական ենք և իմաստունն Եւրոպայ մեզ հետ երախտագետ է» (Իսկ դուք կը Հայկոյցէք) անոնց ՀՄՈՒՏ զբնի արդիւնքը ընտրի պատմական երկարութեան և մատենագրութեան ընտրելու թարգմանութեանց չափար» (1):

Պ. թ. 2.՝ ըսէ՛ք խնդրեմ, երբ «ՄՈՂ»-ի խօսքերն յառաջ կը բերէք, ինչո՞ւ կը կըրճատէք, կը ինքզինքից բնաւ ընդհանրապէս Հայ գրականութեան մասին անոր ճշմարիտ ու նպաստաւոր խօսքերը կը ծածկէք: Ի՞նչն կը թելադրէ ձեզ, մի՞թէ՛ Հայաստանութիւնն է թէ ազգութեանցութիւնն: Ահա՛, նոյն ՄՈՂ-ի խօսքերը դուք այ կարդացէ՛ք, ընթերցողներն ալ թող կարգան՝ «Հայոց մատենագրութեան պատմիչներու»

(1) Աստուածաշունչի Հայերէն թարգմանութիւնը «Թագուհի թարգմանութեանց» կը համարուի ամբողջ աշխարհէն:

կողմանէ ի՞նչ աստիճանի հարուստ ըլլալը՝ քաղաքային ամենուն, (անշուշտ բացի ազգաներէ՛) Ա. է ու թ. 2. է): Բիրտասի թուականին չորրորդ դարէն ի վեր՝ անընդհատ շարք մ'ունի պատմագրաց. անկէ ի գտա՞ն Հայոց երկրին դրից պատմաբան՝ իրենց մատենագրութիւնն ալ, մատենաւոր յատկութիւն մը ունի: Հայք օտար ազգաց վրայ ոչ երբէք ազդեցութիւն մ'ունենցած են (2) այդ դժբաղդ արար միջոց վերաբերութիւն մը եղած է անոնց ու իրենց զրացի աշարհակալ ժողովրդաց մէջ: Ասենով Պարսից Հայաստան եղան, Հոսովայեցուց և Յունաց անցան: Իրենց երկրին մէկ մասը Պաշակապ իշխանութեան կամ ազգացութեան տակ ձգեցին, Մոնղոլներէն ու թաթարներէն հարստահարուեցան: Իրենց տարեգրութեանց հին մասին մէջ պահուած են՝ Սասանեանց ժամանակը գրուած ու կորսուած գրքերու կտորներ: Եւ որովհետեւ Պարսից Հայաստան էին, իրենց կառավարութիւնէն և Կարսից հետ անեցած կոնկրետներէ՛ն՝ Պարսկաստանի վրայ այնպիսի թանկագին տեղեկութիւններ կառուուեք, որ ուրիշ տեղ չեն գտնուիր: (3)

Պ. թ. 2.՝ անցած է այն ժամանակ, որ Հայ գրականութիւնը արհամարհելը, յառաջդիմութիւն և ազատամտութիւն կը համարուէր: Հիմա այդպիսիներուն իմաստակ ու տգէտ կրօնէ՛ն ինձի չէ՞ք հաւատար, լեզուք ուրիշն այն հեղինակութեան, որի առաջ խոնարհած էիք: Լսեցէ՛ք՝ «Մեր ազգայնոց վերջի տարիներու Հայկական դպրութեանց փոյթի և ջանք նշունաւոր և սիրելիք կրնան համարուի: Նախնեաց լեզուին և մատենագրութեան արհամարհող անարարներին և անոնց վրայ զուրցուած լքուցիչ դատարանները, և միայն երեղեցական դատուհանանց ժառանգութիւն մը համարելու կարծիք՝ իրենց նորութիւն կորսուցողաց առջև լուսնայն և դաւաճած են» (Հայագ, հոս ծնան... այն ալ բողոքովին տարբեր ու այլանշակ տեսակէ՛):

Պարսն, եթէ Հայ գրականութիւնը այնչափ արհամարհուած, այնչափ խեղճուկ է (որքան դուք կը կարծէք կամ էք) ըսէ՛ք, ինչո՞ւ հոս բունստի գիտնականներու մեծամասնութիւն մը իրենց ամբողջ կենսաբան նուիրած են Հայ գրականութեան:

(2) Պ. թ. 2.՝ «ՄՈՂ»-ն Հոս՝ քաղաքականապէս ըսել կուզէ, և ո՛չ այնպէս, ինչպէս որ հասկանալու ուզեցէք. ո՞ն էր ձեր Հոսակալութիւնը փաստը. ուրեմն իրաւունք չունի՞ք ձեզ ըսելու թէ այնքան ազէ՛ք, որ երկու տող Հայերէն անգամ չէք կրնար հասկնալ:

(3) Հայկական Հին դպրութեան պատմութիւն, Ա. Հատոր, Գ. սագ. երես 7—9:

Թեան իմաստասիրութեան. Բերովբէ Պատկանեան, Մ. Էմին, Գարագաշեան, Վենետիկի ու Վենետիկի Միլիթարեան յարգելի ահող միաբանութիւնը, Նորայր Բելգապ, Կ. Կոստանեան (Գեորգեան ձեմարանի տեսուչ) Գ Պալթեան, Ե. Վ. Գուրեան, Միքայէլ, Ստ. Մալխասեան, Բաժմաշեան և ուրիշ շատերը, և եւրոպացի Հայագիտաց պատկառելի շարք մը, որոնց ամեն մին տասնեակներով հասարակներ նուիրած են Եւրոպական Գրականութեան՝ Հայ գրականութեան մասին: Եթէ անօգուտ ու ոչինչ է Հայ գրականութիւն, ինչո՞ւ եւրոպական նշանաւոր Հայ մտաւարներու մէջ յատուկ Հայագիտութեան դասընթաց հիմնուած են, և հոն՝ եւրոպացի ուսանողները տարիներով գլուխ կը մաշեցնեն Հայ լեզուն ու մատենագրութիւնը սովորելու:

Մեր գրականութեան մասին եղած գնահատումներ ու քննադատութիւններ կարգացած ենք ու կը կարդանք, սովորած ենք ու կը սովորենք, և քանի՞ մէկ կաշխատի սովորել մի բան, այնքան կը հասկընայ թէ ինչ սովորելու պէտք ունի: Սովորելը պատիւ է՝ այն որ կըսէ գիտնական, նա անշուշտ ոչինչ գիտէ: Միևնոյն ժամանակ ջանալով ճանաչալ մեր գրականութեան առաւելութիւններն ու պարտութիւններն. կը սիրենք մեր ազգը, մեր գրականութիւնը, և կը հաստատենք խորնացիլին՝ «Թէպէտ անքի փոքր անք ենք, բայց բազում արիւթեան զործեր կան մեր մէջ կատարուած, որոնք յիշատակութեան արժանի են»:

* * *

Այժմ դառնանք երկրորդ Հարցին: Թէ մեր գրականութիւնը զրացի ազգաց լուսաւորութեան արև եղած է ինչպէս «Գիտողի» յօդուածին մէջ պարզուած էր, և որպէս զի որոշ կերպով ցոյց տրուի, և հաստատուի թէ վրաց ու Ադրբեյջանի գիրք ու գրականութիւնն Հայոց մով սկսած է, Հայոց գրական արեւէն կեանք առած, հոն կ'առաջարկենք բնաւ Մովսէս Խորենացի Գ. գլխի, զգ. գլուխ՝ «Իսկ Միքայէլը երբեք յայտնաբերուի վրացի վրաց, ու ունի և նոյա նշանաբեր... Եւ ընտրեալ մանուկն, և յերկուս բաժանեալ դասս, և վարդապետութեան նոյա յայտնաբերուի իւրաց, զՏէր Խորենացի և զՄուշէ Տարօնացի»: Այս վրաց մասին և ապա՛

«Եւ ինքն յԱղուանս իլեալ... որովք սոս և զձ զնշանաբերս կոկորդափոս Գուգարացոց լեզուին» ևն.:

Ուրեմն այժմ կը հաստատուի թէ վրաց ու Ադրբեյջանի գրականութեան կենսաբան է Հայ գրականութիւնը: Գէթ մէկ ազգ կուզէիք, սակայն ձեզ երկու:

Էրդ դարուն վրաց կիրիտն կաթողիկոսը, որ պատիւ է վրաստանին եւ

գրականութեան վրայ աւելի երկար կը խօսի: Թէպէտեւ նա շատ կծու է, իր քննադատութիւններու մէջ, սակայն մենք իր քննադատութիւնը չէ որ պիտի լսենք, այլ Հայերու գրատուին պիտի ծանօթանանք, Գրիգորի 16 տարեկան եղած ժամանակ:

«Հայաստանը թագաւորութիւն մըն է, ուր քաղաքացիները եւ թեթեւամտութիւնը այդ ազգի նկարագիրը կը յատկանշեն և երկրին դիրքը ժողովրդի փոփոխութեան ոյժ կուտայ: Հայաստանը Հոսովայեական գաւառներու կից բաւական անը կը ստահմանագծէ, յետոյ ընդարձակորէն կը տարածուի մինչև Մարտի երկրի: Երկու մեծ պետութիւններու միջև խնդրուած — Հոսովայեցուց և Պարսիկաց, Հայերու ասոնց և ոչ մէկուն հաստատամտութեամբ մը յարած են, այլ իրենց բնական փոփոխութեամբը առ երկուքին հետ ալ փոխի ի փոխ անհամաձայն են, Հոսովայեցիներուն հետ արմատացած ասեղութեամբ մը, իսկ Պարսիկաց հետ փառասիրութեան շարժառիթներով և ազգայնական նախանձախնդրութեամբ»:

Միջին դարու ժամանակ երբ ալ Բիւզանդեան Տիրութեանցութիւնը կը խաբարէր և արարական ու երկրպագութեան գործերը զէպի հիւսիս կ'արշաւէին, այդ շահաստակութեանց առաջըն առնելու անկարող,

Բիւզանդիոնի կայսերը Հայ կամաւորներ կը վարձէին և դաշտին վրայ Լէոնիտասներու այլապէս սերունդը, յոյնը, երբ կը փախէր, Հայը քալ մըն ալ չէր ընկրկէր և առիծի նման կը կուտէր, որովհետեւ նա իր ազատ միջովայրի ազատ զաւակն էր և իր արի սրտին մէջ թուրատուութեան հակադիր շարժումը չէր սկսած:

Այն հին հոգը սակայն չկար. հինգ Հարիւր տարուան ստրկութեան դար մը իր ամեն կարգի ու յայտնաբերումով Հայը կը բաժնէր նախնիներէն: Հին Հայաստանը պարպուած էր բերթէ և Հայը թէ թուով նուազած էր և թէ իր այդ փոքր քանակն ալ անազնի տարածութեան մը վրայ սիւսուած: Այլ և այլ ազգաց գերութեան լուծին տակ ընկճուած՝ նա կորսնցուցած էր այն շատ մը բարձր յատկութիւններ, որոնք ազգի մը ինքնուրոյն ոգին և անոր դէպի ազատութիւն ունեցած սկըն ու ձգտում մը կ'արտայայտեն:

Մեր նոր գործիչները անոր մէջ թլուրած ինքնագիտակցութիւնն արթնցնելէ զատ, պիտի աշխատեն նոր ինքնայ մը լուսնի այս կողմ մ'առաջընթացութիւններ, որ քաղաքակիրթ ազգերէ իւրացուցած էին. մէկ խօսքով Հայութեան զաղափարներու, հայեացքներու ու համոզումներու մէջ յեղափոխութիւն մը առաջ բերելու բարձր կոչումն ունենին: Նոյն իսկ

առաջին փորձը ցոյց տուաւ թէ, թէ եւ քաղաքակիրթութիւնը մշակելու առատ հող կար, սակայն մէկ կողմէն տիրող տարրին բիրտ ու թեղ անտես էր եղած, որ միջոց սպառնալից կրնար ըլլար, միւս կողմէ բաւականաչափ մշակ կը պակէր այդ ընդարձակ տարածութեան վրայ այլապատկու: Այդ երկու դժուարութիւններէն զատ՝ անընդ կը մնար որիշ շատ աւելի կորուստ ինքի մը. նոր առաջնախնդր արեւմտեան լուսաւորութեան գաղափարով թէ եւ հարստացած, անձանց ինչ նոյն իսկ այն ժողովրդի տեղական հանգամանքներուն, անոնց նոր ձգտումներուն, անոնց հոգեբանութեան եւ միջնաւ անգամ անոնց աշխարհագրական դիրքին:

Նոր առաջնախնդ միջոցը լեզուած էր Հին Հայաստանի աշխարհագրութիւնով, Հայ ազգի պատմութեան մէջ կատարուած քաղաքական ընթացքները Հոն տեղի ունեցած էին: Վաստակաւոր, Սասուն, Տարօն, Բասեն, Եփրակ, Արարատ, ահա՛ ճիշդ այն ծիրին մէջ էր որ կը ըլլար անոնց միջոցը. հոս՝ Հայկ իր լայնալիճ աղեղով Բիւր էր սպաննած, անընդ կըրուանդեան Տիրութեան իր անգլիստ և հակին սիրտն էր մխած: Ուրիշ տեղ Տրդատը իր հւստիւ կանաչով սրտն էր փոխադրած իր նոր հաստաքի տաճարը կանգնելու համար. քիչ անքիւն Տրդատ և

եղբրը Արտաշի կամ Ծաւարանի դաշտին վրայ Հայ պատմութեան ամենանշանակելի և Հայ պատերու ամենախորը քանդակուող մէկ դէպքն էր կատարուած, վարդապետ իր վաթսուս Հայրով Երեմի Հարիւր Հազարի դէմ էր կուտու և քաղաքար նահատակուած. ազգն ու կրօնքը, եկեղեցին ու Հայրենիքը այդ երկրի մէջ էին իրար ընդգրկած, միաձուլուած և Հայութեան արիւնով սրբազորուած. հետեւաբար հոս այդ Հոյն վրայ էր, որ կարծես Հարկաւորութիւն կար Հայութիւն մը ստեղծել, նոր պայտաբանութիւնը ձգտումներով ու քաղաքակիրթութեան ամենազգի էարթներով:

Շարժումը կսկսէր ոչ այնքան իրականալի կամ գործնական ծրագրով, որքան երեսակայութեան փայլուն հետապատկերներով: Կրթական կազմակերպութիւնները, որոնք կոչուան ունեին յայ ծրագրեր իրականացնելու, երբ հայութեան փոքր մէկ մասին մէջ գործելով միասին իրենց սխալներու խաբասփութներէն ազատելու ջանքեր կընէին և շարժումի ալիքները սկսած էին ծաւալանալ, նոր հասանք մը կուտար գիտնական տակն ու վրայ ընել այդ հին կարգն ու կանոնը: Հայկական Յեղափոխութիւն կոչուած ժարժումն էր այդ:

(Շարժանակելի) Ս. ՍՈՒՐԵՆ

ու ծանր կոտորած տալով զայն կը հալածէ. սակայն վերջին լուրերը կը ցուցնեն թէ անգլիական բանակը տեղի կուտայ Պոէրներուն ու իր զինքերէն ետ կը մըլուռի, որովհետեւ վերջինները միացած Օրէնճ ազատ նահանգներու և դրացի ուրիշ ցեղերու զօրութիւններուն, անհամատու զօրութեամբ են. մինչդեռ առաջինին առ այժմ ունեցած զօրքերը բազմաթիւ շատ քիչ են: Սակայն Անգլիա մեծ պատրաստութիւն ձեռնարկներ է: Անգլիա իր այս ահազին պատրաստութիւններուն մէջ միայն Պոէրը չէ, այլ մէկէ աւելի եւրոպական մեծ պետութիւններու թշնամութիւններն ի հաշիւ ունի: Անգլիական թերթեր կը գրեն թէ՛ Ռուսիա և Ֆրանսա կու գնն օգտուել Անգլիայ իր ուժերը Ափրիկէի մէջ կեդրոնացունելով՝ ներկայիս ունեցած կաշկանդեալ դրութեան, անոնք կը պատրաստուին վերջինէս վրէժ լուծել, և և Ափրիկէի Արևելեան մասին մէջ, Չինաստան, Թիւրքիա և այլուր իրենց ունեցած ձգտումները իրագործել. սակայն կը յաւելուն ինքնավստահ կերպով թէ՛ իրենց կառավարութիւնը ժամանակին այս բաները ինկատի ունեցեր և անանկ պատրաստուեր է, որ ամեն տեղ Բրիտանական շահերը պաշտպանելու կարող է:

Ռուսական թերթեր կը գրեն թէ՛ Անգլիա թրանսպարէն վրայ պատերազմ մղելու ընթացքին հետեւելէ առաջ՝ Գերմանիոյ հետ այն համաձայնութեան եկեր է, որ Ափրիկէի գործերուն մէջ անոր պաշտպանութիւնը վայելէ ու ինքը փոխադարձաբար զայն պաշտպանէ Փոքր Ասիայի մէջ:

Վերջին հեռագրի մը նայելով՝ Գերմանիա, Ռուսիա, Ֆրանսա, Իտալիա Աւստրիա, Պելճիզա ու Հոլանտա միացեր են Անգլիոյ դէմ՝ Պոէրները պաշտպանելու, մանաւանդ Ափրիկէի մէջ Բրիտանական կայսրութիւնը հաստատելու անհաճոյ կարելութիւնը անյաջող հանելու: Պոէրներու պատերազմը եւրոպական պատերազմի վերածուելու վտար իրականութեան մօտ բան մը կը համարուի և կը կարծուի որ Միացեալ Նահանգները Անգլիայի կռնակ պիտի կենան:

ԹՈՒՐԻՔԻԱ

Պարսիքի հրաժարականին Սուլթանի կողմէն տրուած պատասխանն է եղեր. «Բիշ մը համբերութիւն ունեցիր և քանի մը օր ետք ամեն բան կը շարունակուի»:

Ալպանիայի մէջ մեծ անհանգստութիւն կայ, և երկրին մէջ, գրեթէ, անիշխանութիւն կը տիրէ:

Սուլթանը Արարական դժուարութիւններուն վերջ մը տալու նկատմամբ, այդ երկրին կառավարութեանը նոր ձեւ մը տալու և հոն խալիֆէութիւն հաստատելու վրայ կը խորհի:

Վենիզուէլայի յեղափոխական լայնակը տիրեց մայրաքաղաքին և նախագահը 800 հոգի հետն առնելով փախաւ: Այժմ երկիրը յեղափոխականներուն ձեռքն է:

Բրիտանական երեք յաժմակուորներ այսօր Լոնտոնէն ճամբայ ելած են միանալու ռթը մարտանաւերու և ուրիշ երկու յաժմակուորներու և զնալ ձիարալթարի:

Այս նաւային համախմբումը կը կատարուի այն նկատողութեամբ թէ՛ եւրոպական միջամտութեան սպառնալիքը կայ:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԷՆ

Անոնց որոնց զրկուած են Հոկտ. 4 և 6 թիւ նամակները, և զեռ շին պատասխանած, կը խնդրէինք որ բարեհաճէին պատասխանել: Հակառակ պարագային պիտի դադարեցնենք թերթը, միևնոյն ժամանակ խնդրելով որ վճարեն իրենց հին պարտքը:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Վաղը (Կիրակի) Ս. Ոսկերբան եկեղեցւոյ մէջ Արթ. Պաղ վարդապետ պիտի քարոզէ նիւթ ունենալով՝ «Կան մարդիկ որոց մեղքը իրենցմէ յառաջ դատաստան կը հասնի, և կան մարդիկ, որոց մեղքը յետոյ կերթայ»:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶՍՏ ԼՍՍՐԱՆ ՆՈՒ ԵՈՐԳԻ

Հայկական Ազատ Լսարանի ժողովը սեղի կուեննայ յառաջիկայ Կիրակէ (29 Հոկտ.) Elks Hall ժողովարանին մէջ ի թիւ 19 W. 27րդ փողոց Պրոտուէյի անկիւնը: Ժողովը կը բացուի ճիշդ ժամը 8ին և կը փակուի 10ին:

Լսարանի մէջ պիտի խօսի Յարգելի Տօք. Յովհաննէս Արշակունի՝ նիւթ ունենալով «Թոքախտային հիւանդութիւնը», և պիտի բացատրէ անկէջ զուշանալու միջոցները:

Ամեն Հայ, ինչպէս նաև տիկնայք և օրիորդք, սիրով կը հրաւիրուին լսել և օգտուել այն կարեւոր ատենախօսութեան:

Թեմակալ Հովիւ ՍԱԴ ՎԱՐԴԱՊԵՏ

Պ Ա Տ Կ Ե Ր Ն Ե Ր

(Մեր կենսաքէն)

Գրեց

Վ. ՇԱՀԷՆԻ

Գին 15 սէնթ:

Կը պարունակէ չորս վէպիկներ Հայաստանի նորագոյն իրական կենսաքէն առնուած:

Կը վաճառուի նիւ Երզնի մէջ «Ձայն Հայրենեաց» Պարագրատան և Հայկական Ընթերցարանի թանգարանացետ: Պ. Ղ. Պոյաճեանի մօտ:

Բրովիտինս Տթթ. Ա. Շահպաղեանի մօտ: 74 North Main St. Prov. R. I.

Թրոյ՝ Պ. Մ. Հայրապետեանի, Մանչէսթըր Պ. Մ. Արտանի և Ֆրէզնօ Պ. Ա. Պարթեանի մօտ:

Ուստր Պ. Գրիգոր Պոյաճեանի մօտ: Սակաւաթիւ օրինակներ փնայած են:

ԾԱՌՈՒՒ ԽԱՆՈՒԹ

Սովորական բանաձևը չէ: Ես որոշած ըլլալով զպրոց երթալ, կօշկակարի իմանութիւն կը վաճառեմ: Խանութիւն արդէն ունեցած յաջողութիւնը ընտանիքի մը ապրուստը գոհացուցիչ կերպով կ'ապահովէ: Իրօք առանձին գործ ընել փափաքողի համար լաւ պատեհութիւն է:

Մ. Տ. ՃՈՐՃՈՐԵԱՆ 154 East 28th St.

1-2

Ա Ջ Դ

Նիւ Երզնի 28րդ փողոցի Հայկական ճաշարանը իմ գրաւիս տակ ըլլալով կառավարութեան օրինօք՝ կ'իջէ մէկը գնելու կուզէ՛ թող դիմէ՛ ինձ:

Մ. ՂԱԶԱՆՃԵԱՆ

Ա Ջ Դ

Յառաջիկայ Կիրակի առաւօտ (Հոկտ. 29) Հ. Ա. Եկեղեցիին Հովիւը երէց Հայկակ Յ. Պաղոյեան պիտի քարոզէ հետեւեալ ազգային կրօնական կարեւոր նիւթին վրայ. «Ի՞նչ է Հայ Լուսաւորչական և Աւետարանական եկեղեցիներու ներկայ յարաբերութիւնը: Անոնք Մայր և Որդի կրնա՞ն համարուիլ»:

Ամեն Հայ կը հրաւիրուի:

ՈՒԷՍԹ ԶՊՊՐԸՆ

Մ Ե Մ Ս Գ Ա Հ Ա Ն Դ Է Ս Ի Յիշատակ Հայաստանի Հազարաւոր Նահատակներուն կրք Տարեդարձին:

Վարչութիւնն որոշած է յառաջիկայ Կիրակէ Հոկտ. 29ին տխուր հանդէսով մը յիշատակել Հայաստանի մէջ նահատակուող մեր անթիւ հայրենակիցներու հրք տարեդարձը:

Այս առթիւ կը հրաւիրուին բոլոր երկսեռ Հայերը ներկայ գտնուիլ այս հանդէսին և յարգանք մատուցանել մեր Հայրենակիցներու յիշատակին:

Սըմյ և Սփրբինկ ըթրիաներու անկիւնը, սովորական սրահին մէջ:

ԼՍՍՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ

ԱՌ ԶԵՌՆ ԱՄԵՐԻԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ Անգլիերէն և Հայերէն

Աշխատասիրեց ՊԵՏՐՈՍ Ռ. ԹՈՐՈՍԵԱՆ

Հրատարակութիւն Էլիոտ Պարաֆ և Ընկ. Նիւ Երզնի

Կը պարունակէ շուրջ 25,000 բառեր, ընտիր Ամերիկեան արտասանութեամբ և խիստ դիւրահասկանալի բացատրութիւններով:

Գինն է \$2.50

Դիմել առ J. CHOOLJIAN, College Point, N. Y.

Գրքերը Հոկտ. 20էն վերջ ծախու պիտի գտնուին հետեւեալ անձերու քով:

Մամլաբաթեան Եղորարք, Փաթրոն, Ն. Ճ. Յ. Պատմաճեան, Սթեյրլինկ, Ն. Ճ. Ապահուի Եղորարք, Չըլսի, Մասս. Պ. Կոտտաբեան, Լօրէնս, Մասս. Յ. Բարակեան, Ուսթըր, Մասս. Թ. Թօփրահանեան, Ֆրէզնօ, Բալ.

Ներկայիս կը խնդրեմ մեր բաժանորդներէն, որ հաճին իրենց Առ Զեռն Ամերիկեան Բառարանիս բաժանորդագրութեանց ստացագրքերը ինձ վերադարձնել իրենց ներկայ հասցէովը միտին և ստանալ իրենց Բառարանը: Գրքերը պիտի դրկուին Հոկտ. 15էն վերջ:

Պ. Ռ. Թորոսեան 564 Clinton Ave. West Hoboken, N. J.

Կը ծախուի նաև խմբագրութեան քով:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Հ. Ե. Թանգարանի Միութեան 10րդ շրջանի անգամակցութիւնը բացուած է: Ուրախ ենք յայտարարելու որ այն Գրադարանը վերջերս չափազանց ճոխացած է, թէ՛ այլ և այլ օգտակար գրքերով և թէ՛ բաղմատեսակ թերթերով:

Ամեն ճաշակի յարմար ընթերցանութեան գրքեր և թերթեր միշտ տրամադրելի են:

Ձէրօք փափաքէր տարեկան միայն մէկ անգամ վճարելով անգամակցիլ այն բազմօգուտ կազմակերպութեան և ամբողջ տարի մը ձեր միտքը բեղմնաւորելու հաճոյքը վայելի:

Թանգարանը բաց է ամեն Գշ. և Յ. Եր. դիշերները ժամը 8-10, իսկ կիրակիները 1-5:

Ծնորհիւ սոյն բարեկարգութեան և կարգուսարքին, որ մուտ գտան վերջերս Թանգարանին մէջ, ընթերցողներու թիւը հետզհետէ կըստուարանայ:

Առատ ընթերցանութեան նիւթ, յարմար ժամագրքովայր, ծայրայեղ կարգապահութիւն:

Այցելեցէք անգամ մը և համոզուեցէք: 145 E. 23րդ փողոց: ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՄԱՐԹԻՆ ԳԻՆՕ

Վաճառանոց անական ամեն կարգի կահ կարասեաց:

Հայերը սակէ պատշաճագոյն տեղ չեն կրնա գտնուի գնելու, մահճակալ, մեթրէն, սեղան, ջեռոց, կարպետ և որ ի կարգին:

Հասցէն է՝ MARTIN KEENOW 79 Green St. ; Albany N. Y.

ԿԸ ՓՆՏՈՒԻՆ

Գտնէմք Եսայի Կօշկակարեան, որն մի քանի ամիսներէ ի վեր անհետացեր է:

Մարանկող Կարապետ Գարակէօզեան: Սերաստիոյ Դըմաճ գիւղացի Առաքել Սէրէմիտեանը:

Ասոնց հասցէները գրել խմբագրութեան:

Ամերիկայի Հայ Հրատարակչական Ընկերութեան Հետ յարաբերելու ուղղունը կամ անգամակցիլ ցանկացողները դիմելու են Վարչութեան Ատենակապտին, հետեւեալ հասցէով:

Armenian Publishing Co. 1035 P. O. Box Providence R. I.


Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ

Ս, Տամպուրանեան 509 2րդ Ալիւր. 28 և 29րդ փողոցի մէջ

Մենք կը ծախենք արևելեան և արևմտեան ամէն կարգի նպարեղէններ. թարմ բանջարեղէն, պտուղ և աւօրեայ թարմ միս:

Ուստի պատուական պըլլուրը և ծեծածը փաւընտը 3 սէնթ, մեծաբանակ գնողներուն համար 2½ սէնթի, Հայկական պանիրին փաւընտը 15, իսկ մեծաբանք գնողին համար 13½ սէնթի: Թիթապուլին փաւընտը 10 շատ գնողներուն համար 9 սէնթի, Թիթապուլի պատուական իւղին կէլընը \$1.40 ի կը ծախենք:

Նամակով յանձնարարութիւն կը կատարենք փութով. գրել վերի հասցէին:



Դ Ե Ր Չ Ա Կ

ՅԱԿՈՒՆ ՈՒՉՈՒՆԵԱՆ 159 Իսթ, 27րդ փողոց

Թէ պատուական և թէ աժան հանգերձ կը փնտռէք, անանկ չէ. մենք սուղ կը շինենք — բայց չէ. մեր գործին որքա՞ն աժան ըլլալը ատեն մը գործածուելէն ետք միայն կրնաք հասկնալ. անոնք որ իրենց դրամը անարժէք ապրանքի տուած ըլլալու զընտմը չեն ուզեր ունենալ և նոյն ատեն լաւ ճաշակ մը ունին, անգամ մը մեղի հանդիպելուն համար ուրախ պիտի ըլլան: Մենք զուտ անգլիական ապրանք միայն կը գործածենք:

Ուրիշ տեղերու վրայ հարկւրին քառասուն աժան պատրաստի հանգերձ ալ կը ծախենք. նաև կը նորագնէք, կը մաքրենք, կը ներկենք և կարգուկենք:

Գիտնալու համար թէ՛, մենք մեր Հայրենակիցներէն, ուրիշ տեղերէ շատ զգալի կերպով վար գին կառնենք, անգամ մը մեղի այցելելը պիտի բաւէ:

Ա Ջ Դ

Նիւ Երզնի Պլզուրի Ընկերութիւնը առ այժմ լուծուած է, ցնոր կարգադրութիւն:

Ա Ջ Դ

42րդ փողոցի Ս. Բարթոլոմէոս եկեղեցւոյ մէջ նախապէս կազմուած Հայկազեան կաճառը տեղափոխուած և աւելի հաստատ հիմնուել վրայ վերակազմուած ըլլալով՝ իւր մարզութիւնները կը շարունակէ ի թիւ 498 3րդ Ալիւր 33 և 34րդ փողոցի մէջտեղ, վերին յարկ, ամեն Ուրբաթ իրիկուններ ժամը 8½ 10ը:

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ

Եզրպտուէն Գրիգոր Գիէրճեանի և Եղիա Փէշկիվանեանի հասցէները հաղորդել խմբագրութեան կամ Թրոյ Մ. Հայրապետեանի:

ԿՈՒՉՈՒԻ

Լաւ խոհարար մը կու գուի գոհացուցիչ շաքարակահանով:

ԳՐԻԳՈՐ ՄԱՌՈՒՄԵԱՆ Silk Mille, Summit N. J.